

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԿԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

THE NAGORNO-KARABAKH REPUBLIC  
THE MINISTRY OF EDUCATION AND SCIENCE  
MESROP MASHTOTS UNIVERSITY



НАГОРНО-КАРБАХСКАЯ РЕСПУБЛИКА  
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ  
УНИВЕРСИТЕТ МЕСРОП МАШТОЦ

04/11/2011

Միջազգային գիտաժողով  
ԽԱՂԱՂ ԿՈՎԿԱՍԸ՝  
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Международная научная конференция  
МИРНЫЙ КАВКАЗ  
КАК ФАКТОР РАЗВИТИЯ РЕГИОНА

International Scientific Conference  
PEACEFUL CAUCASUS  
AS A FACTOR OF REGION DEVELOPMENT



ՆԿԻՐԿՈՒՄ Է ԼՂՀ ԵՎ ՀՀ ԱՆԿԱՍՈՒԹՅԱՆԸ  
ПОСВЯЩАЕТСЯ НЕЗАВИСИМОСТИ НКР И РА  
DEDICATED TO THE NKR AND THE RA INDEPENDENCE

1991-2011



**ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

1. **Ղ.Ս. Գաբրիելյան**, Մերոպ Մաշտոց Համալսարանի ռեկտոր, մ.գ.թ. դոցենտ, ՄՍՀ պրոֆեսոր
2. **Ղ.Ս. Բաբայան**, ՄՍՀ գիտական աշխատանքների և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, փ.գ.թ., ՄՍՀ պրոֆեսոր
3. **Ա.Վ. Վարդանյան**, Մերոպ Մաշտոց Համալսարանի ուս. աշխատանքների գծով պրոռեկտոր, պ.գ.թ., դոցենտ, ՄՍՀ պրոֆեսոր
4. **Մ.Ա. Արզումանյան**, ՄՍՀ պատվավոր դոկտոր
5. **Լ.Յու. Բախշյան**, բնաստիական ֆակուլտետի դեկան, ՄՍՀ դոցենտ
6. **Ա.Գ. Շահրամանյան**, ՄՍՀ Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄ**

- Ֆ.Շ. Ազատյան**, ՄՍՀ Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի ավագ դասախոս  
**Լ.Գ. Մարգարյան**, բ.գ.թ., ՄՍՀ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ  
**Ա.Վ. Ներսեյան**, ՄՍՀ ավագ դասախոս, ուսումնական մասի վարիչ  
**Ա.Վ. Սաֆարյան**, ՄՍՀ մեթոդաբանական խմբակի ղեկավար

**Редакционный совет**

1. **Д.С. Габриелян** - ректор Университета Месроп Маштоц, к.п.н., доцент, профессор УММ
2. **Г.М. Бабаян** – проректор по научной работе и внешним связям, к.филос.н., профессор УММ
3. **А.В. Варданян** - проректор по учебной работе, к.и.н., доцент, профессор УММ
4. **М.А. Арзуманян** – почетный доктор УММ
5. **Л.Ю. Бахшиян** – декан филологического факультета УММ, доцент УММ
6. **А.Г. Шахраманиян**, зав.кафедрой русского языка и литературы УММ

**Рабочая группа**

- Փ.Մ. Ազատյան**, старший преподаватель кафедры русского языка и литературы УММ  
**Լ.Գ. Մարգարյան**, к.п.н., зав.кафедрой армянского языка и литературы УММ  
**Ա.Վ. Ներսեյան**, старший преподаватель УММ, зав. учебной частью  
**Ա.Վ. Սաֆարյան**, председатель метод.совета УММ

Գ 600 Գիտաժողովի նյութեր: Միջազգային գիտաժողով՝ նվիրված ԼՂՀ և ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձին: Խաղաղ Կովկասը՝ տարածաշրջանի զարգացման գործոն / ԼՂՀ ԿԳՆ: Մերոպ Մաշտոց համալսարան. - Եր.: Լիմուշ, 2011. - 664 էջ:

Сборник научных трудов международной научной конференции “Мирный Кавказ как фактор развития региона”, в которой участвовали ученые из России, Германии, Израиля, Казахстана, Украины, Армении и НКР.

Мы сожалеем, что на наше приглашение принять очное и заочное участие в работе конференции не отозвались ученые из некоторых стран нашего региона. Только мирный Кавказ может стать гарантом развития всего кавказского региона, условием благополучия всех без исключения народов, населяющих его. Представленные в сборнике статьи ученых из ближнего и дальнего зарубежья подтверждают истину, что наука и образование вне политики и не имеют границ, и что настоящие ученые – это люди, которым дорог мир.



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ  
СОДЕРЖАНИЕ**

**ՓԻԼՍՈՓՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱԿՈՒՆՔ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
ФИЛОСОФИЯ, ПРАВО, ПОЛИТОЛОГИЯ**

**1. ԱՐԴԱՀԱՄՅԱՆ ԱԼՇԱՐԴ**

Արդ՛հ փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս  
ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ  
ԱՈՒՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....12

**2. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ**

բ.գ.թ., Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ  
Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ  
ՀԵՏՆՈՐՀՐԴՅԻՆ ԱՐՀԵՍԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԻՇԵՄԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ.....20

**3. БАБАЯН ГАРИБ**

к.филос.н., профессор УММ  
**РОССИЙСКО-КАРАБАХСКИЕ (АРЦАХСКИЕ) СВЯЗИ КАК ИСТОРИЧЕСКИЙ  
И ДУХОВНЫЙ ПРИМЕР МИРНОГО СОСУЩЕСТВОВАНИЯ НАРОДОВ  
КАВКАЗА.....30**

**4. БАРБАШИН МАКСИМ**

Южнороссийский филиал Института Социологии Российской Академии Наук, с.н.с.  
**ПРОЦЕССЫ ИНСТИТУЦИОНАЛЬНОЙ АДАПТАЦИИ ТРАДИЦИОННЫХ  
НАРОДОВ: МЕТОДОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ.....38**

**5. БЕЛЯЕВ ИЛЬЯ**

старший преподаватель Московский Государственный Областной Гуманитарный Институт  
**ГНОСЕОЛОГИЧЕСКОЕ ОБОСНОВАНИЕ СУЩЕСТВОВАНИЯ  
ВИРТУАЛЬНОГО (МНОЖЕСТВЕННОСТИ МИРОВ) В ФИЛОСОФИИ  
СРЕДНЕВЕКОВЬЯ И ВОЗРОЖДЕНИЯ.....48**

**6. БЕЛЯЕВ ИЛЬЯ**

старший преподаватель Московский Государственный Областной Гуманитарный Институт  
**СТАНОВЛЕНИЕ ПРЕДСТАВЛЕНИЙ О ВЗАИМОСВЯЗИ ВОЗМОЖНОСТИ  
И ДЕЙСТВИТЕЛЬНОСТИ В АНТИЧНОЙ ФИЛОСОФИИ.....54**

**7. ВАРДАЗАРЯН СЕРГЕЙ**

Аспирант факультета "Политология", Младший научный сотрудник российско -  
армянского  
(Славянского) Университета  
**ПУТИ ПРЕДОТВРАЩЕНИЯ ТЕРРОРИЗМА НА СЕВЕРНОМ КАВКАЗЕ.....64**



ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱՎՈՒՆՔ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
ФИЛОСОФИЯ, ПРАВО, ПОЛИТОЛОГИЯ

**ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ  
ԱՈՒՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԱՐՐԱՀԱՄՅԱՆ ԱԼՎԱՐԴ**

ԱրՊՀ փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս  
ԼԴՀ (Ստեփանակերտ)

Հասարակության սոցիալական խմբերի միջև ծագող հակամարտությունների համակարգում առանձնահատուկ տեղ են գրավում էթնիկական խմբերի միջև ծագող հակամարտությունները: Ազգի աստիճանին հասնող խմբերի միջև ծագող հակամարտությունները կոչվում են ազգամիջյան հակամարտություններ: Պատմությունը վկայում է, որ էթնիկական հակամարտությունները ծագել են էթնիկական խմբերի կազմավորմանը զուգընթաց, և կդրսևորվեն ու կպահպանվեն նույնքան ժամանակ, որքան գոյություն ունեն էթնիկական խմբերն ու ազգերը:

Ի տարբերություն հասարակության սոցիալական կառուցվածքում ծագող այլ հակամարտությունների՝ ազգամիջյան հակամարտությունները գոյանում են անկախ հասարակության զարգացման աստիճանից:

Ազգամիջյան հակամարտությունները կարող են ծագել ամենուր, որտեղ առկա են ընդհանրապես ազգամիջյան հարաբերությունները: Հարց է առաջանում՝ ազգամիջյան հակամարտություններն, արդյոք, պատահական հասարակական երեկույթնե՞ր են, թե՞ օրինաչափ բնույթ ունեն: Տեսական քաղաքագիտության մեջ գերիշխող կարծիքի համաձայն՝ ազգամիջյան հակամարտությունների ծագման ու զարգացման գործընթացն օրինաչափ բնույթ ունի: Իսկ որո՞նք են այն օբյեկտիվ նախադրյալները, որոնց հետևանքով ծագում են այդ հակամարտությունները:

Ազգամիջյան հակամարտություններն ի սկզբանե չեն ծագել որպես տարբեր էթնիկական խմբերի միջև գոյավորվող բնական հակակրանքի արդյունք: Հակամարտություններն ազգային կեցվածք են ստանում տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական և այլ ասպարեզներում իրականացվող քաղաքականության հետևանքով: Խտրական քաղաքականության վարման արդյունքում ազգամիջյան հակամարտության ձևավորման առաջին նախապայման է դառնում ազգային ինքնագիտակցության մեջ արթնացած ու հիմնավորված ազգային շահը:

Ազգերի միջև ձևավորվող հարաբերությունները կայանում են բազմաթիվ ազդակների ազդեցության ներքո: Այդպիսի ազդակների համակարգում որոշիչ գործոններից մեկը պատմական պայմանն է, այսինքն, թե ինչպիսի պատմական խնդիրներով, իրադարձություններով են պայմանավորվում ազգերի միջև կայացող հարաբերությունները: Առավելագույնս պատմական գործոնով է



պայմանավորվում այն, որ հաճախ տարբեր ազգերի ներկայացուցիչներ միմյանց նկատմամբ օգտագործում են «դարավոր բարեկամներ» կամ «դարավոր հակառակորդներ» հասկացությունները: Ազգամիջյան հարաբերությունների ձևավորման գործընթացում հանդես են գալիս տարբեր հիմնախնդիրներ: Այդ հիմնախնդիրները կարող են ծագել պատմական իրադարձությունների գնահատման, սոցիալ-տնտեսական գործընթացների ծավալման, լեզվի, մշակույթի և այլ արժեքների նկատմամբ ունեցած վերաբերմունքի, մոտեցման ու գնահատման պատճառներով: Պատմական պատճառականությունը առկա է նաև ադրբեջանա-ղարաբադյան հակամարտության ասպարեզում: Անդրկովկասի տարածաշրջանում խորհրդային կարգերի հաստատումից առաջ առկա են եղել ազգամիջյան հակամարտություններ: Այդ հակամարտությունների հիմքում եղել է պատմական գործոնը, այսինքն՝ հայ ժողովրդի ղարաբադյան հատվածի տեղի հիմնախնդիրը: ներկա շարադրանքում շրջանցում ենք ղարաբադցիների օրինավոր ու արդարացի պայքարի գործընթացը, մեկնաբանումը՝ հաշվի առնելով, որ հրապարակի վրա կան մեծ քանակությամբ գիտական ուսումնասիրություններ: Նշենք միայն, որ խորհրդային իրավակարգի հաստատման իրադրությունում ղարաբադցիները ձգտել են կամավոր կերպով ընդունել խորհրդային իշխանությունը՝ դրա մեջ փնտրելով իրենց պաշտպանությունը: Նշենք, որ պատմական այդ պահին արյունաքամ եղած, տակավին նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը գտնվում էր ծայրաստիճան ծանր կացության մեջ: Եվ հետևաբար Ղարաբադի միավորումը Հայաստանի հետ պայմանավորվում էր ժամանակի խառն իրադարձությունների հետագա հնարավոր զարգացումներով: Այս տեսանկյունով ընդունելի չենք համարում Լեռնային Ղարաբադի հայ բնակչության հանդեպ այն կարծիքը, որի համաձայն՝ խորհրդային իշխանությունները բռնի միջոցներով են իրենց ենթարկել Անդրկովկասի ժողովուրդներին: Չժխտելով այն փաստը, որ իրոք, խորհրդային զինված ուժերի աջակցությամբ են կազմավորել Անդրկովկասի խորհրդային հանրապետությունները՝ գտնում ենք, որ այդ ժամանակ Լեռնային Ղարաբադում ստեղծված կացության պայմաններում, երբ հիմնովին ավերվել էին Շուշի քաղաքը ու տասնյակ հայկական գյուղեր, միանգամայն բնական էր, որ ղարաբադցիները, առանց երկմտության, դրսևորեցին ռուսաստանյան կողմնորոշվածություն՝ դրանով հետ նաև պայմանավորելով Հայաստանի հետ վերամիավորվելու հույսը: Լեռնային Ղարաբադի բնակչության ճնշող մասի մոտ պահպանվում է հավատը Ռուսաստանի նկատմամբ՝ հաշվելով, որ օրհասական պահին հուսալի օգնություն կարող է ցուցաբերվել միայն քրիստոնեական Ռուսաստանից:

Անցյալ դարի 20-ական թվականների սկզբներին պատմական իրադարձությունները դասավորվեցին այնպես, որ խորհրդային Ռուսաստանի շուրջը միավորվեցին բազմաթիվ ազգեր, ազգություններ և էթնիկական խմբեր՝ ստեղծելով հզոր ու բազմազգ միություն: Այդ միությունը ժամանակակից հասարակագիտական գրականության մեջ, ինչպես նաև միջազգային հարաբերությունների գործընթացում վերանվանվում է «խորհրդային կայսրություն» հասկացությամբ: Սակայն հարց է առաջանում, թե որքանով է



արդարացվում էՍՀՄ-ի այսպիսի վերանվանումը: Նոր պատմագրության մեջ հայտնի է, որ խորհրդային իրավակարգի հաստատումից առաջ մարքսիստական գաղափարախոսության կողմից մշակվել էր ուսմունք՝ ազգերի ծագման ու պատմական զարգացման մասին: Իր թերություններով հանդերձ՝ այս ուսմունքում միանշանակ առաջադրվել են ազգերի ինքնորոշման իրավունքի, բազմազգ երկրներում ազգերի իրավահավասարության, ազգային ճնշման վերացման, ռասիզմի դատապարտման սկզբունքները: Մարքսիստական գաղափարախոսության այս սկզբունքները որդեգրել է խորհրդային իշխանությունն իր պրակտիկ գործունեության համար, և, մեր կարծիքով, անժխտելի են այն դրական ձեռքբերումները, որոնք կայացել են ազգային հարաբերություններում խորհրդային իշխանության տարիներին: Ուստի արդարացի չի լինի նույնացնել խորհրդային Միության և կայսերական-ցարական Ռուսաստանի վարած ազգային քաղաքականությունը: Կայսրությունների էթնիկական քաղաքականության հիմնական հատկանիշը եղել է մեծ կամ բնիկ էթնիկական խմբի կողմից իր տիրապետության տակ եղած մյուս էթնիկական խմբերի ու ժողովուրդների ճնշումը ուժի միջոցով: Այդպիսիք են եղել հռոմեական, պարսկական, թուրքական, բրիտանական կայսրությունները: Ուս ազգը խորհրդային իշխանության տարիներին այդպիսի դեր չի կատարել: Ռուսաստանի տարածքում բոլոր ազգերի մարդիկ ունեցել են իրավահավասար պայմաններ: «Խորհրդային քաղաքացի» հասկացությունը հպարտության խորհրդանիշ է եղել բոլոր ազգերի մարդկանց բացարձակ մասի համար: Սակայն, այսքանով հանդերձ, խորհրդային ավտորիտար իշխանության պայմաններում իրական հիմքեր են ստեղծվել նաև ազգամիջյան հակասությունների համար, որոնք հաճախ նույնիսկ բացահայտ բնույթ են ստացել տարբեր առիթներով: Իսկ ԽՍՀՄ-ի քայքայումից հետո նույն հակասությունները վերածվել են հակամարտությունների՝ վերաճելով նաև տարածաշրջանային պատերազմների: Բանն այն է, որ, խորհրդային իշխանությունների կողմից ազգերի ինքնորոշման իրավունքի մասին մարքսիստական սկզբունքը ազգային քաղաքականության կառուցման հիմք հայտարարելով հանդերձ, միաժամանակ կատարվեցին այդ սկզբունքի արտառոց խախտումներ: Պարզապես թրատվեցին ամբողջական ազգաբնակ տարածքներ, և պետական ու կուսակցական առանձին գործիչների կամայականությամբ այդ տարածքները առանց իրավական ակտերի և առանց տվյալ տարածքում դարերով բնակված էթնիկական խմբերի համաձայնության, բռնակցվեցին այս կամ այն միութենական հանրապետությանը: Այսպիսի անօրինական տիպական օրինակ է Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի բռնակցումը Ադրբեջանին: Համանման անօրինություններ կատարվեցին նաև Վրաստանի, Ռուսաստանի Ղազնության, Ուզբեկստանի հանրապետությունների ձևավորման գործընթացում: Մինչդեռ խորհրդային պետական նշանավոր շատ գործիչներ դեռևս 20-ական թվականներին այն կարծիքին էին, որ ազգային պետական կազմավորումների ձևավորման ժամանակ նրանցից յուրաքանչյուրում պետք է ներառել բոլոր այն տարածքները, որոնք հիմնականում բնակեցված են նույն ազգին պատկանող բնակչությամբ: Խորհրդային պետական գործիչներ Ս.



սիրովը և Ս. Օրջոնոկիձեն միանշանակ գտնում էին, որ Հայաստանի Հանրապետության տարածքում պետք է ընդգրկվեն Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանը և Ադրբեջանին սահմանակցող հայաբնակ մյուս բոլոր շրջանները: Սակայն բոլշևիկյան կուսակցության գործիչներ Նարիմանովին և Ստալինին հաջողվեց Լենին առաջնորդի հովանավորությամբ հիմնահարցը լուծել Ադրբեջանի և Թուրքիայի օգտին:[1]

Էթնիկական կոնֆլիկտների ծագման պատճառական կապերի համակարգում կարելի է առանձնացնել առավելապես երկու որոշիչները՝

ա) ազգային ինքնագիտակցության ակտիվացումը,

բ) էթնոսի պրակտիկ կյանքում կուտակված հիմնահարցերը, որոնք տարիներով լուծում չեն ստանում քաղաքական համակարգի և ռեժիմի պայմաններում: Այս երկու գործոնների առկայության դեպքում էթնիկ խումբը, ազգությունը, ազգը ձգտում են պահպանել ազգային արժեքները, էթնոսի կյանքում կուտակված հիմնահարցերը կարող են ունենալ լեզվամշակութային, սոցիալ-տնտեսական և քաղաքական իմաստներ: Կոնֆլիկտի ծագման մեջ լեզվամշակութային հիմնահարցերը ավելի սրտահույզ բնույթ ունեն: Դա այն ազդակն է, որը հավասար ազդեցություն ունի էթնոսի բոլոր սոցիալական շերտերի վրա: Տնտեսական գործոնը հայտնվում է հատկապես էթնոսի տնտեսական շահերի նսեմացման պայմաններում: Ազգային ինքնագիտակցության ակտիվացումն անխուսափելիորեն ուղեկցվում է քաղաքական ակտիվության առաջացումով: Հանդես են գալիս էթնոսի քաղաքական լիդերներ, որոնք կասկածի տակ են դնում հիմնավորված գաղափարական-քաղաքական սկզբունքները և առաջադրում են քաղաքական ինքնորոշման իրավունքի հիմնախնդիրը:

Ազգամիջյան հակամարտությունների առաջացման համար պատճառ կարող է հանդիսանալ նաև պետական բարձրաստիճան սուբյեկտների կամքով թելադրված ազգային կազմավորումներում իրականացվող տնտեսական ու սոցիալական քաղաքականությունը: Այսպես՝ խորհրդային իշխանության տարիներին կենտրոնական իշխանության մեջ բարձր դիրքեր զբաղեցնող քաղաքական գործիչները միանգամայն տարբեր մոտեցումներ էին ցուցաբերում տարբեր ազգային կազմավորումների նկատմամբ: Նկատելի էին այդ տարբերությունները հատկապես միութենական հանրապետությունների և ազգային ինքնավարությունների նկատմամբ ցուցաբերվող մոտեցումներում: Իսկ միութենական այն հանրապետություններում, որոնց կազմում ձևավորվել էին ազգային ինքնավարություններ, դրանց զարգացման գործընթացը միանշանակ պայմանավորվում էր միութենական հանրապետության լիդերի կամքով: Դա ցայտուն արտահայտվում էր Լեռնային Ղարաբաղի հանդեպ Ադրբեջանի պետական այրերի կողմից ցուցաբերվող վերաբերմունքում: Լեռնային Ղարաբաղը դիտվում էր տարածքային այնպիսի միավոր, որը պետք է հանրապետության բնակչությանը ապահովեր գյուղատնտեսական մթերքներով: Ըստ որում, պարտադիր պլանավորման հիմունքներով արտադրված գյուղատնտեսական մթերքների չնչին մասն էր մնում մարզի բնակչությանը: Առյուծի բաժինը պետզնումների կարգով, համարյա ձրի, հանձնվում էր ընդունման կետերին: Նշված միտքը հաստատելու համար բերենք համեմատական փաստարկների՝ Ադրբեջանի տարածքում



կազմավորված երկու ինքնավարություններում՝ Նախիջևանի ինքնավար հանրապետությունում և ԼՂԻՄ-ում գյուղատնտեսական մթերքների արտադրության և դրանց պետզնումների մասին մի քանի տվյալներ (1980թ. Նախիջևանը հայաթափված էր, իսկ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության թիվը կազմում էր 123 հազար): 1980 թվականի տվյալներով՝ Նախիջևանի ինքնավար հանրապետությունում հայերի թիվը կազմում էր ողջ բնակչության 1.4 %-ը, իսկ Լեռնային Ղարաբաղում այն կազմում էր 76%: Նախիջևանի գյուղական վայրերում բնակվում էր 179 հազար մարդ, Լեռնային Ղարաբաղում՝ 88 հազար մարդ: Նախիջևանի հանրապետությունում 1980 թվականին արտադրվել է 25 հազար տոննա հացահատիկ, 5800 տոննա միս, 27600 տոննա կաթ, 44700 տոննա խաղող: Մինչդեռ Լեռնային Ղարաբաղում արտադրվել է 71 հազար տոննա հացահատիկ, 11 հազար տոննա միս, 52 հազար տոննա կաթ, 112 հազար տոննա խաղող: Բերված թվերը վկայում են, որ չնայած Լեռնային Ղարաբաղի գյուղական բնակչությունը երկու անգամ քիչ էր, քան Նախիջևանի գյուղական բնակչությունը, բայց Ղարաբաղում արտադրված գյուղատնտեսական մթերքների քանակը գերազանցում էր Նախիջևանում արտադրվածին: Իսկ ինչպես էին բաշխվում երկու ինքնավարություններում արտադրված գյուղատնտեսական մթերքները և կապիտալ ներդրումները: Եթե Նախիջևանում արտադրված 5800 տոննա մսից պետզնումներով հանձնվել էր 3690 տոննա, ապա Ղարաբաղում 11 հազար տոննայից հանձնվել է 10140 տոննա, այսինքն՝ մարզի բնակչությանը արտադրվածից մնում էր ընդամենը 800 տոննա: Նույն կարգով էլ բաշխվում էին մյուս մթերքները: Եթե Նախիջևանին կապիտալ ներդրումների համար 1955-1980 թվականներին հատկացվել է 570 մլն ռուբլի, ապա Ղարաբաղին նույն ժամանակահատվածում հատկացվել է ընդամենը 370 մլն ռուբլի: Նշված թվերն ու փաստերը վկայում են ադրբեջանական իշխանությունների վարած երկդիմի քաղաքականության մասին՝ ազգային տարբեր կառուցվածք ունեցող երկու ինքնավարություններում: Այսպիսի քաղաքականությունը նպաստեց նաև ադրբեջանա - ղարաբաղյան հակամարտության հասունացմանը:

Ազգամիջյան հակամարտությունների ծագման ու հասունացման պատճառներից է նույն տարածքում ապրող մարդկանց բաժանումը բնիկ և ոչ բնիկ էթնիկական խմբերի: Այսպիսի բաժանումը հաճախ հովանավորվում է իշխանությունների կողմից: Արդի ժամանակաշրջանում, օրինակ, Ռուսաստանի Ղաշնության բարձրաստիճան չինովնիկները հրապարակային ելույթներում հաճախակի օգտագործում են «ռուսներ և այլ ազգություններ» արտահայտությունը՝ ընդժելու համար Ռուսաստանի ողջ բնակչությունը: Այսպիսի արտահայտության իմաստն այն է, որ Ռուսաստանը պատկանում է ռուսներին, բայց Ռուսաստանում ապրում են այլ ազգություններ: Խորհրդային իշխանության տարիներին այսպիսի որոկումը ավելի կոպիտ կերպով դրսևորվել է Լեռնային Ղարաբաղում ապրող հայերի նկատմամբ, որը բխել է ադրբեջանական իշխանությունների քաղաքականությունից: Այդպիսի քաղաքականության հովանավորությամբ է, որ Ղարաբաղում բնակվող փոքրաթիվ ադրբեջանցիները իրենց համարում էին բնիկներ, իսկ հայերին՝ եկվորներ, որոնք ի վերջո պետք է հեռանային իրենց դարավոր հայրենիքից: Տիպական է հատկապես հետևյալ օրինակը: 1966թվականին Սամեդ - օլի



վեթիվովը (բանաստեղծ Սամեդ Կուրդունի տղան) «Մոլոդոյոժ Ազերբայջանա» ռուսատառ թերթում տպագրեց մի հոդված, որտեղ պնդում է, թե Լեռնային Ղարաբաղում ապրող բնակչության բնիկ էթնիկական խումբը ադրբեջանցիներ են, հայերը 18-րդ դարում քրդական հարձակումներից փախած եկվորներ են, որոնց ադրբեջանցիները ոչ միայն տեղ են տվել բնակվելու համար, այլև տվել են նրանց հաց և մարդկային արժանապատվություն: Մինչդեռ իրականում ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Լեռնային Ղարաբաղի տարածքում 18-րդ դարի երկրորդ կեսին նախկին վրանաբնակ ադրբեջանցիներն են առաջին անգամ ոտք դրել՝ խմբի ավագ Ֆանահ Ալու գլխավորությամբ: [2]

Ազգամիջյան հակամարտությունները աղետների չվերածելու համար քաղաքագետների կողմից առաջադրվում են մի շարք սկզբունքներ, որոնցից կարելի է ընդգծել հատկապես հետևյալները.

- ազգամիջյան հակամարտությունների կանխման ամենառեալ միջոցը բազմազգ տարածքներում, անկախ էթնիկական պատկանելությունից, բոլոր քաղաքացիների հանդեպ ռազմավարական իրավահավասարության քաղաքականությունն է: Այս առումով հասարակագիտական ուսումնասիրություններում իբրև դրական օրինակ ընդգծվում է Իսպանիայում, Շվեյցարիայում, Հնդկաստանում և մի շարք այլ երկրներում արմատավորված ազգային քաղքականությունը: Մինչդեռ խորհրդային իշխանության տարիներին ադրբեջանական իշխանությունների կողմից ԼՂԻՄ-ի հայ բնակչության հանդեպ վարած ազգային քաղաքականության միակ նպատակը եղել է մարզի հայաթափման ռազմավարական ծրագիրը: Հայկական դպրոցներում արգելվել է հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությունը, խստիվ հսկողության տակ են առնվել մշակութային օջախների գործունեությունը, ամեն կերպ խոչընդոտվել է Հայաստանից հայերեն գրականության ներմուծումը: Պլանավորված կարգով աստիճանաբար ավերվել են հայկական ծագում ունեցող հուշարձաններն ու հնությունները.

- ազգամիջյան հակամարտությունների կանխման ռեալ միջոց է համարվում դեռևս ձևավորման սաղմնային վիճակում գտնվող իրադրության ճիշտ գնահատումը և օպերատիվ միջոցառումների ձեռնարկումը: Այդպիսի միջոցառումների համակարգում կարևորագույն դերը պատկանում է կողմերի բանակցություններին՝ ուժային ընդհարումները կանխելու համար: Ղարաբաղյան հակամարտության գործընթացում կատարվել է հակառակը: Ադրբեջանական կողմից բարի կամքի դրսևորման փոխարեն ձեռնարկվել է պատժիչ գործողությունների լայնածավալ ծրագիր՝ մյուս կողմին ուժի միջոցով ճնշելու նպատակով.

- հակամարտությունների կանխման միջոցներից է համարվում նաև տուժող կողմի պահանջների քննարկումը և հնարավորության պայմաններում դրանց բավարարումը: Տուժող կողմը հաճախ բավարարվում է ինքնավարության կարգավիճակի փոփոխումով, տնտեսական ու սոցիալական պայմանների բարեփոխումներով, նյութական միջոցների հատկացումով և այլն: Ինչպես հայտնի է, Ղարաբաղյան հակամարտության ժամանակ Մոսկվայի կողմից առաջարկվել է միութենական ֆոնդից ԼՂԻՄ-ի տնտեսական ու սոցիալական զարգացմանը հատկացնել 400 մլն ռուբլի: Սակայն Ղարաբաղցիները հրաժարվեցին այդպիսի մեծ



գումարից, մանավանդ, որ այդ գումարը պետք է ծախսվեր միայն Ադրբեջանի իշխանությունների հայեցողությամբ:

Այսպիսով՝ միանշանակ մերժվում է այն կարծիքը, թե իբր ազգամիջյան հակամարտությունների պատճառական կապերը պետք է փնտրել էթնիկական էլիտայի նպատակների, ձգտումների կամ էլ արտաքին ազդակների ազդեցության մեջ: Իրականում այդպիսի հակամարտությունների հիմքում ավելի շատ օբյեկտիվորեն գործող հարաբերություններն են, որոնք դրսևորվում են հասարակության զարգացման գործընթացում և արտահայտում են էթնիկական խմբի կամ ազգի համընդհանուր շահերը: Հասարակական պրակտիկան հաստատում է, որ ազգամիջյան հակամարտությունների ձևավորման ու կայացման գործընթացում շահում են միայն այն դեպքում, երբ միակողմանի հաղթելու նպատակադրությանը փոխարինում է համաձայնողականության և փոխզիջման մթնոլորտի ստեղծումը:

Ժամանակակից աշխարհում մարդկային հասարակության գաղափարաքաղաքական կյանքում բացառիկ դեր է կատարում կրոնը: Այն զինամիջոց է և՛ առաջադիմական, և՛ ամենառեակցիոն ուժերի համար: Բնական է, որ քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, բոլոր կարգի իշխանությունները ձգտում են նորմալ հարաբերություններ կառուցելու կրոնական կազմակերպությունների և հիմնարկների հետ՝ իրենց քաղաքական հիմնախնդիրների լուծման նպատակով: Կրոնական հիմնարկներն իրենց հերթին ուղղակի, թե անուղղակի կերպով ձգտում են որոշակի ազդեցություն գործել քաղաքական կյանքի վրա: Հետևաբար, կարելի է ասել, որ քաղաքական կյանքի վրա կրոնի ազդեցությունը միանշանակ լինել չի կարող, այն հակասական բնույթ ունի և պայմանավորվում է կրոնական լիդերների աշխարհայացքով, մարդասիրական զգացմունքներով, ձգտումներով և այլ գործոններով: Ուստի հայացքների և ձգտումների հակասականությամբ պայմանավորվում է նաև կրոնական կոնֆլիկտների բնականոն առկայությունը: Իր ծագման ժամանակներից առ այսօր կրոնին հատուկ է եղել քաղաքական նաև ֆունկցիան: Ուստի քաղաքական իշխանության համար մղվող պայքարում այսպես թե այնպես կրոնական հիմնարկներն ու լիդերներն ունեն իրենց մասնակցությունը: Ժամանակակից իսլամական աշխարհի որոշ երկրներում կրոնը և քաղաքականությունը հանդիսանում են միասնություն:

Քաղաքագիտական գրականության մեջ օգտագործվող «իսլամիզմ» հասկացությունը արտահայտում է շարիաթի ֆունդամենտալ սկզբունքների անմիջական կիրառումը քաղաքականության մեջ: Որոշ քաղաքագետների կարծիքով, արդի աշխարհում զլոբալ բնույթի կոնֆլիկտային իրավիճակ է ստեղծվել իսլամիզմի և քրիստոնեական աշխարհի միջև, որի արդյունքում ձևավորվել է զլոբալ բնույթի կոնֆլիկտային վիճակ քրիստոնեական և իսլամական քաղաքակրթությունների միջև:[3] Հայտնի է, որ 20-րդ դարի 60-80-ական թվականներին իսլամական աշխարհի երկրների մեծ մասը հովանավորվում էր ԽՍՀՄ-ի կողմից, ուստի այդ երկրները ունեին սոցիալիզմի կողմնորոշվածություն: ԽՍՀՄ-ի քայքայումից հետո նշված երկրներում սոցիալիստական գաղափարախոսությանը փոխարինեց նացիոնալիզմը, որի հետևանքով



աշխուժացավ հակաարևմտյան (քրիստոնեական) տենդենցը: Արդյունքում՝ ձևավորվեց գլոբալ բնույթի կոնֆլիկտային իրավիճակ քրիստոնեական Արևմուտքի և իսլամիզմի միջև: Ըստ որում իսլամիզմը իր հակամարտությունը փորձում է արդարացնել գաղափարախոսական այն դրույթով, որի համաձայն՝ Արևմուտքը ամերիկյան իմպերիալիզմի գլխավորությամբ նպատակադրվել է ստեղծել համաշխարհային տիրապետություն, որի դեմ պայքարում են իսլամական ժողովուրդները:

Արդի աշխարհում բավականին տարածում ունեն աղանդավորական շարժումները: Կրոնական աղանդը ստեղծում է իր սեփական հատուկ կազմակերպությունը, որը հակադրվում է պաշտոնական եկեղեցու հիմնական արժեքներին: Աղանդները նպատակային լայն աշխատանք են ծավալում հատկապես երիտասարդության շրջանում: Աղանդները փորձում են առաջադրել մարդկանց վարքի կարգավորման հատուկ սկզբունքներ և ներկայանալ իբրև Աստծո միակ հավատարիմներ: Առանձնապես կոնֆլիկտային սուր բնույթ են ստացել իսլամի երկու ուղղությունների՝ շիաների ու սյունիների գաղափարական վեճը Մուհամմեդի հետևորդների մասին:

Վերջում ընդգծենք, որ իրավացի են բոլոր այն տեսաբանները, որոնք կոնֆլիկտի ծագումը համարում են օբյեկտիվ ու կենսական երևույթ: Ուստի կոնֆլիկտի կառավարման ու կարգավորման միակ ուղին կողմերի հանդուրժողականության ցուցաբերումը և փոխզիջումների միջոցով խաղաղ ելքով համաձայնության ձեռքբերումն է:

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. См. Гайк Демоян. Турция и Карабахский конфликт. Ереван, 2006, стр. 60-61.
2. Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի մասին օգտագործված տվյալները տես  
Народное хозяйство Азерб. ССР за 60 лет. Азгосиздат. Баку 1980, стр. 336-341, 351-355
3. См. Г.И. Козырев, Политическая конфликтология, М., 2008, стр. 181